

ՊԵՏԱՊՈԼԻՏԵԱՆ ՀԵՄԵՐ

ԴԻՐՔ՝ ԵՒ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԳԵՊ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Նոր. Սրոգ, Ապրիլ 1951, էջ 122)

Աշոտ նոր շրջան մը բացաւ իր յանդուգն մտադրութիւններովն ու ձեռնարկներով: 858 ին Պոլսոյ պատրիարքական զահր բարձրանալով՝ այդ երիտասարդ իշխանագլուներ իր ամբողջ հանճարն ու հնարագիտութիւնը գործածեց բաժնելու համար Յոյն Եկեղեցին Լատինականէն. նպատակին հասնելու համար նախագզուութիւններ ձեռք առաւ. ուզեց նախապէս Արեւելի փոքր Եկեղեցիներն իրեն միացնել, եւ ի միջի այլոց դիմեց նաեւ Զաքարիա Զազեցի հայրապետին (854-77), որ իրեն նման ղէպբերու յանկարծական պահանջովը բարձրացած էր կաթողիկոսական Աթոռ: Այդ թղթակցութիւններէն մեզի հասած են միայն Փոտի «առ Աշոտ» թուղթը (Գիրք ԲՊՐ. 279-82), եւ Աշոտի պատասխանը զոր գրած է Սահակ Մառութ որ եւ Ապիկուրէյ (անդ, էջ 283-94, հմմտ. Ասողիկ, էջ 174): Փոտէն ուրիշ նամակ մըն ալ կայ ձեռագիր, որուն վաւերականութիւնը կասկածելի է իր անհարթ ոճովն ու սխալաշատութեամբ(*): Մառութ շատ յաջող կերպով կը ներկայացնէ Հայ Եկեղեցին, Կիւրդի, Աթանասի եւայլն բացատրութիւններն յիշելով. զՔրիստոս կը դաւանի ըստ Կիւրդի ուղղափառ բանաձեւին, «միացեալ յերկուց բնութեանցն անշփոթ եւ անբալ միաւորութեամբ» (էջ 284). եւ բնագրական համեմատութիւններով զուգակշիռը կ'ընէ Նեստորի խօսքերուն եւ Լեւոնի Տումարին, ու նոյն կը գտնէ զանոնք ի հիման, հետեւաբար նաեւ հերետիկոսական: Փոտի ձեռնարկն ալ միութեան տեսակէտէն աւելի արդիւնք

մը չունեցաւ քան Գերմանոսինը. թէեւ յաջողեցաւ իր բուն նպատակին մէջ որ էր «Արեւելից Հերձուած»ը: Գէորգ եւ Մաշտոց կաթողիկոսներու օրով նշանակելի ղէպք մը չկայ Եկեղեցական միութեան խնդրոյն նկատմամբ. միայն քաղաքական յարաբերութիւններ բիջ մը աւելի կը սերտանան Աշոտ Ա. ի զահակալութեամբ, որ թագ կ'ընդունի Յունաց կայսրէն եւ Ամիրապետէն միանգամայն: Յովհաննէս Զ. Պատմաբան (897-930) աւելի դժբախտ կացութեան մը ենթարկուեցաւ. բանտարկութիւններէ եւ շղթաներէ յոգնած՝ վայրկեան մը փափաքն ունեցաւ երթալու կայսեր մօտ որ խոստացած էր հանգիստ ապաստան շնորհել իրեն. «բայց, կը գրէ նա իր Պատմութեան մէջ (206), զմտաւ ածեալ թէ գուցէ գտցի որ եւ ընդ ակամբ հայեացի՝ զանդ երթալն իմ ի քաղկեդոնիցսն յարակցիլ ինձ համարեալ, եւ ապա այսպէս ո՛չ կամեցայ զնալ ի գայթակղութիւն մտաց տրկարաց»: Այսպիսի փափուկ էր ահա կաթողիկոսին դիրքը եւ այսպիսի զօրաւոր՝ ժողովուրդին հակակրութիւնը հանդէպ Յոյներուն կամ քաղկեդոնականութեան: Պատմաբանի երեք անմիջական յաջորդները՝ որոնց օրով Աթոռը Աղթամար փոխադրուեցաւ, նըշանակելի դեր մը չունին ինչպէս ուրիշ նոյնպէս նաեւ յունա-հայկական խնդիրներու մէջ: Անանիա Մոկացին է որ (943-965) մինչեւ այն ատեն նմանը չի տեսնուած խրատութիւններու դիմեց: Յոյներն սկսած էին յայտնի ոտնձգութիւններ ընել իրենց բաժնի Հայոց մէջ՝ որոնցմէ շատերը կը փախչէին կրօնական մոլեռանդութեան բիրտ արտայայտութիւններէն. իսկ զայթողները կրկին կը մկրտուէին Յոյներու կողմէ՝ որոնք անփաւեր կը նկատէին Հայոց մկրտութիւնը:

(*) Այս մասին երկար պիտի չխօսինք հոս. անցեալ տարի արդէն ուսումնասիրած ենք զայն եւ մանրամասնաբար ծանօթարանելէ վերջ՝ չըրկած՝ Օրմանեան Սրբազան Պատրիարքին:

Մոկացի խստաբարոյ հայրապետը հանրային գայթակղութիւնը բառնալու եւ քաղկեդոնիւններուն դաս մը տուած ըլլալու համար միանգամայն՝ ժողով գումարեց նըշանաւոր վարդապետներ հրաւիրելով. «եւ սուրա մամնեքեան խորհրդական բնութեամբ, ընտրութեամբ գրովք աստուածայնովք, հրամանաւ Տեառն Անանիայի զբաղկեղոնական մկրտեալսն կրկին անգամ հրամայեցին մկրտել» (Ասողիկ, էջ 165): Ասողիկ կը ջանայ աստուածաբանական ձեռնարկութիւններով ապացուցել ու արդարացնել Հայ Եկեղեցւոյ ներողամիտ ոգւոյն այս անօրինակ խստացումը. աւելի ճիշդ կ'ըլլայ սակայն անոր մէջ հակազդեցութիւն մը միայն տեսնել յունական սնամտութեան եւ մոլեռանդ ամբարհաւաճութեան դէմ: Անանիայի յաջորդն ու ձեռնասուներ Վահան-իկ՝ նուազ խիստ վարուելով՝ զահագուրկ եղաւ ժողովական որոշմամբ: Խաչիկ կաթողիկոսի (973-92) անունէն անբաժան պիտի ըլլայ Հայ Եկեղեցւոյ եռանդուն պաշտպանի համբաւը. իր օրով յունական ոտնձգութիւնները աւելի սաստկացան. Սերաստիոյ յոյն մետրապոլիտը սկսաւ նեղել Հայերը. քահանաները շղթայակապ զրկեց Պոլիս եւ Գաբրիէլ աւագերէցը բրածեմ սպաննեց (Ասողիկ, էջ 189): Հակաքրիստոնէական այս բիրտ հալածանքներու առջեւ տեղի տուողները կազմեցին հայ-հոռոմները, որոնք գոյութիւն ունին մինչեւ այսօր: Արշարունի հայրապետը տեսնելով որ Սերաստիոյ Յոյները նոյն իսկ «արգիլին զժամածայն հայոց», եւ քաղկեդոնական նախանձայուզութեամբ նախատական թղթեր կ'ուղղեն իրեն, գրաւոր պատասխանեց անոնց. «մեր ո'չ թշնամութեան բանս հակառակ թշնամեաց ձերոց գրեմք. զի ո'չ մեր-եւ ո'չ եկեղեցիքն Աստուծոյ ունիմք այնպիսի սովորութիւն, որպէս ասէ Պօղոս երանելին». ամբողջ նամակը զոր Ասողիկ պահած է (էջ 190-235) ծայրէ ծայր քաղուածն մըն է ուղղափառ Հայերնու բանածներուն. «Երկուց զոյութեանցն կատարեցելոց միաւորութիւն», (Կիրեղ), եւայն. բուն նպատակն է յոյն ուղղափառներու վկայութեամբ հերքել Քաղկեդոնի վարդապետութիւնը: Խաչիկ կաթողիկոսէն ուրիշ նամակ մըն ալ զոր գրած է Սամուէլ Կամբջածորեցի՝ կը տեսնենք Գիրք Թղթոցի մէջ (էջ 302-322),

ուղղուած Մելիտինոյ Թէոդորոս մետրապոլիտին: Սրամիտ բննադատութեամբ համեմուած ճշմարիտ հաւատոց վերլուծում մըն է այն. «իբրեւ զբաջ հովիւ զհետ ընթացեալ որպէս մոլորելոց, հրաւիրեալ էք զմեզ թղթովս ընդ այլ հեթանոսս՝ ի կաթողիկէ եկեղեցի՝ ի հաւատս ճշմարիտս՝ եւ առ զաւագանն երկաթի որ մանրէ զաշխարհ: Բարի է հրաւէրդ, եղբայր սիրելի, բայց անագան է յոյժ. այլք նախ քան զեւզ եւ քան զբազումս հասին առ մեզ հրաւիրակք ի Ս. Հոգւոյն ... բայց դու ո'չ բարիոր գործես, զի ո'չ միայն ի մատասաներորդ ժամուն ըստ աւետարանին, այլ ընդ երեկս կամ թէ ի մէջ գիշերի տաս զհրաւէրդ ... դադարեաց, ո'վ սիրելի, յայդմ խնդրոյ. թո'ղ զմեզ եւ երթ լեր աւետարանիչ, քարոզ եւ հրաւիրակ այնոցիկ որք ոչ ճանաչին զԱստուած» (էջ 303): «Ո'չ երկու բնութիւն աստուածութեանն եւ մարդկութեանն, եւ ո'չ շփոթութիւն, այլ միութիւն անշփոթաբար» (315), այս է իրենց դաւանութիւնը՝ ըստ Նիկիականին «զոր ունիմք առանց յաւելման եւ պակասութեան» (304): Կամբջածորեցիի այս նամակը զեղեցկագոյն յիշատակարան մըն է, գրական յաջող արտայայտութեամբ եւ աստուածաբանական ներհուն հմտութեամբ: Խաչիկ հայրապետի մահէն վերջ խնդիրները շատ տխուր հետեւանքներու յանգեցան: Հայոց քաղաքական վիճակը տագնապալի էր: Նախարարներն սկսան ներքին երկպառակութիւններու եւ արտաքին շարժառիթներու պատճառով իրենց երկիրներն յունական զաւառներու հետ փոխանակել: Դաւիթ Կիրապաղատ՝ հակառակասէր ոգիով՝ իր աշխարհը կտակեց Վասիլ կայսեր՝ որ փութաց տէր կանգնիլ անոր: Յոյները զինուորական ուժով մտան ի հայս. Սարգիս Ա. Սեւանցի կաթողիկոս (992-1019) հաշտարարի դեր կատարեց իշխաններու եւ կայսեր միջեւ: Յոյներն ալ յարմար չի դատեցին այդ միջոցին քաղկեդոնական խնդիրներ յուզել՝ ուրիշ աւելի մեծ շահեր չի փտանգելու համար: Պետրոս Գետադարծ (1019-58) տխուր էջ մը կը բանայ հայրապետներու շարքին մէջ:

ՇԱԽԱՐՀ ՎՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ

(Նամասակ)

(Շարունակելի՝ 3)